ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻ

ՀՐԱՄԱՆ

«26» 12 2024 թ. Թիվ 259-Լ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 5-Ի ԹԻՎ 173-Լ ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասով, «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով և Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի նախագահի 2021 թվականի հոկտեմբերի 15-ի թիվ 132-Լ հրամանով հաստատված N 4 հավելվածի 5-րդ կետի 9-րդ և 10-րդ ենթակետերով.

Հրամայում եմ.

1. Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի նախագահի 2022 թվականի հոկտեմբերի 5-ի «Գաղտնի քննչական գործողությունների, կապի օպերատորներին ներկայացվող տեղեկատվության պահանջի կատարման կազմակերպման կարգերը հաստատելու, Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի նախագահի 2021 թվականի սեպտեմբերի 1-ի թիվ 116-Լ և 2021 թվականի նոյեմբերի 5-ի թիվ 149-Լ հրամաններն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 173-Լ հրամանում (այսուհետ՝ հրաման) կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1) հրամանի 3-րդ կետն ուժը կորցրած ճանաչել.

2) հրամանի N 1 հավելվածի 1-ին կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Սույն կարգով սահմանվում է Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումներում Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության

օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 241-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 2-րդ և 4-րդ կետերով սահմանված գաղտնի քննչական գործողությունների կատարման ընթացակարգը:».

3) հրամանի N 1 հավելվածի 3-րդ գլխի վերնագիրը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3. ԲՈՎԱՆԴԱԿԱՅԻՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ (ԲԱՑԱՌՈՒԹՅԱՄԲ ՀԵՌԱԽՈՍԱՅԻՆ ԽՈՍԱԿՑՈՒԹՅԱՆ) ՎԵՐԱՀՍԿՄԱՆ ԿԱՏԱՐՄԱՆ ԸՆԹԱՑՔԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ».

4) հրամանի N 1 հավելվածի 4-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«4. Օրենսգրքով նախատեսված բովանդակային տվյալների (այսուհետ՝ վերծանում) վերահսկման (բացառությամբ հեռախոսային խոսակցությունների) վերաբերյալ հանձնարարություններն ու դատարանի որոշումները հետաքննության մարմին են ուղարկվում ստորաբաժանման պետի կամ նրա տեղակալի ուղեկցական գրությամբ՝ «Ծառայողական օգտագործման համար» նշումով՝ ծառայողական էլեկտրոնային փոստով:».

5) հրամանի N 1 հավելվածի 15-րդ կետում «քննիչի» բառից հետո լրացնել «ծառայողական» բառը.

6) հրամանի N 2 հավելվածի 1-ին կետում «232-րդ հոդվածի 3-րդ մասով» բառերը փոխարինել «232-րդ հոդվածի 3-րդ և 3.1-ին մասերով» բառերով.

7) հրամանի N 2 հավելվածի 2-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2. Կապի օպերատորներից, հսկող դատախազի կողմից հաստատված, քննիչի որոշմամբ կարող են պահանջվել Օրենսգրքով նախատեսված բաժանորդային տվյալները:».

8) հրամանի N 2 հավելվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 2.1-ին կետով.

«2.1. Կապի օպերատորներից, դատարանի որոշման հիման վրա կարող են պահանջվել Օրենսգրքով նախատեսված բովանդակային տվյալները:».

9) հրամանի N 2 հավելվածի 3-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3. Տեղեկատվության պահանջը ներկայացվում է «Ծառայողական օգտագործման համար» նշումով՝ Կոմիտեի առաջին բաժնի միջոցով՝ ծառայողական էլեկտրոնային փոստով:».

10) հրամանի N 2 հավելվածի 4-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«4. Կապի օպերատորներին տեղեկատվության պահանջ է ներկայացվում.

1) սույն կարգի 2-րդ կետով նախատեսված տվյալները ստանալու նպատակով հսկող դատախազի կողմից հաստատված քննիչի որոշման հիման վրա,

2) սույն կարգի 2.1-ին կետով նախատեսված տվյալները ստանալու նպատակով քննիչի միջնորդությունը դատարանի կողմից բավարարվելու դեպքում՝ դատարանի որոշման հիման վրա:».

11) հրամանի N 2 հավելվածի 6-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«6. Տեղեկատվության պահանջ ներկայացնելու մասին քննիչի որոշման (այսուհետ՝ քննիչի որոշում), իսկ սույն կարգի 2.1-ին կետով նախատեսված դեպքերում՝ դատարանի

որոշման (այսուհետ՝ դատարանի որոշում) պատճենները ուղեկցական գրությամբ՝ «PDF» ձևաչափով՝ մեկ էլեկտրոնային նիշքով (ֆայլով) Կոմիտեի տվյալ ստորաբաժանման ծառայողական էլեկտրոնային փոստից, գործավարություն կազմակերպողի միջոցով, ուղարկվում են Կոմիտեի առաջին բաժին՝ «operator@investigator.am» ծառայողական էլեկտրոնային փոստի հասցեին (նիշքը կրում է ելից գրության համարը):

Նույն քրեական վարույթին վերաբերող քննիչի և դատարանի որոշումներն ուղարկվում են մեկ էլեկտրոնային նիշքով (ֆայլով) սույն կետով նախատեսված կարգով:».

12) հրամանի N 2 հավելվածի 8-րդ կետում «Յուրաքանչյուր որոշում՝» բառերը փոխարինել «Յուրաքանչյուր քրեական վարույթով քննիչի, դատարանի որոշումների պատճենները՝» բառերով.

13) հրամանի N 2 հավելվածի 14-րդ կետում «էլեկտրոնային» բառից առաջ լրացնել «ծառայողական» բառը.

14) հրամանի N 2 հավելվածի 16-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերում «քննիչի որոշման» բառերը փոխարինել «քննիչի, դատարանի որոշումների» բառերով:

2. Սույն հրամանն ուղարկել Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի նախագահի տեղակալներին, Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումների պետերին, Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի գլխավոր քարտուղարին և առաջին բաժնի պետին:

Ա. ՊՈՂՈՍՅԱՆ